Հատկանշական է, որ Դավրիժեցին Խորենացուն ողբերգակ է անվանում՝ «ըստ քերթողահօրն Մովսիսի ողբերգակի...» (էջ 88):

Այս պարագային խնդիրն այն է միայն, որ պատմագրքի հյուսվածքում ***ողբի փեղադրության առումով*** Դավրիժեցին հետևում է ոչ թե պատմահոր, այլ Արիստակես Լաստիվերցու օրինակին: Վերջինիս ընդհանրական ողբը ցրված է նրա «Պատմության» տարբեր մասերում, ընդմիջարկվում է տարաբնույթ տեքստերով, այնինչ՝ Խորենացու ողբն առանձին ամբողջություն է նաև տեքստային միասնականության առումով: Սա արդեն պատմագրության ներժանրային օրինաչափությունների փոփոխությունների հետևանք է:

Ողբը Դավրիժեցու պատումին ուղեկցում է հիմնականում «Յաղագս առաջին գալոյ Ջղալօղլւոյն, յորոյ պատճառէ քշեաց շահն բոլորովին բովանդակ զերկիրն Արարատու և զնորին մերձակայ սահմանակից երկիրսն ընդ նմին» վերնագրով Դ, ինչ-որ չափով նաև՝ «Յաղագս քշելոյ զամենափարթամ գիւղաքաղաքն Ջուղայու յերկիրն Պարսից» վերնագրով Ե գլուխներում: Այսինքն՝ Դավրիժեցին ողբացել է մեծ գաղթը, կամ ինչպես անվանում են նաև՝ մեծ սուրգունը, որը նրա պատմագրքում վկայագրված ամենացնցող իրադարձությունն է, և որը համազգային ողբերգության նշանակություն է ունեցել:

Ահա այդ իմաստով Գրիգոր Գապպենճյանը, ով Կ. Պոլսի «Տաճար» շաբաթաթերթում իր հեղինակած «Հայ ողբերգուներ» շարքում Եղիշեից, Արիստակես Լաստիվերցուց, Թովմա Մեծոփեցուց բացի, ընդգրկել է նաև Առաքել Դավրիժեցուն, ակնհայտ չափազանցություն և ժանրային թյուրընկալում է հանդես բերել՝ նրա պատմագիրքն ընդհանրապես դիտարկելով ողբի ժանրային տիրույթներում: Այնինչ՝ խնդիրն ավելի շատ քննելի է ոճական մակարդակում՝ ողբի ժանրային տարրերի գերակայությունը և «Գիրք պատմութեանց»-ի մասնավոր դրվագները նկատի ունենալով: